ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՓՈՐՁԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Արման Սարգսյան
ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Վերջին մի քանի տասնամյակում պետությունների համագործակցության մեջ որպես հարաբերությունների կառուցման ձևաչափ լայն տարածում են ստացել ինտեգրացիոն գործընթացները, որոնք իրականացվում են պետությունների որոշակի խմբի կողմից ինտեգրացիոն կազմավորում հիմնադրելու միջոցով: Իհարկե, լայն առումով պետությունների մասնակցությամբ ստեղծվող բոլոր ինտեգրացիոն կազմավորումները միջազգային կազմակերպություններ են, քանի որ դրանք բոլորն էլ, որպես կանոն, օժտված են միջազգային կազմակերպության բնորոշ բոլոր հատկանիշներով: Նման կազմավորումներ են Եվրոպական միությունը (ԵՄ), Շանհայի համագործակցության կազմակերպությունը, Եվրասիական տնտեսական ընկերակցությունը և այլն: Նշված ինտեգրացիոն կազմավորումների շարքը գալիս է համարելու Եվրասիական տնտեսական միությունը (այսուհետ՝ նաև ԵՏՄ), որին անդամակցում են Հայաստանը, Ռուսաստանը, Ղազախստանը և Բելոռուսիան: Ինչպես արդարացիորեն նկատում են Ռիկա Դրագնևը և Կատարինա Վոլշչուկը, Եվրասիական տնտեսական միությունը Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միության (ԽՍՀՄ) փլուզումից հետո նորանկախ պետությունները միավորելուն ուղղված հերթական քայլն է[1]: Սակայն մինչ այդ գոյություն ունեցող նախաձեռնություններից (Անկախ պետությունների համագործակցություն, Հավաքական անվտանգության պայմանագիր կազմակերպություն, Սևծովյան տնտեսական համագործակցություն) ԵՏՄ տարբերվում է նրանով, որ նրա ստեղծման հիմքում ընկած է Եվրոպական միության՝ որպես առավել հաջողված ինտեգրացիոն կազմավորման օրինակը[2]: Համենայն դեպս դա է հուշում այս ինտեգրացիոն կազմավորման հիմնադիր փաստաթղթի՝ «Եվրոպական տնտեսական միության մասին» պայմանագրի[3] և Եվրոպական միության իրավական ռեժիմը սահմանող «Եվրոպական միության» ու «Եվրոպական միության գործունեության մասին»[4] պայմանագրերի դրույթների համեմատական վերլուծությունը: Երկու ինտեգրացիոն կազ-

[1] Տե՛ս Rika Dragneva and Kataryna Wolczuk, Russia, the Eurasian Customs Union and the EU: Cooperation, Stagnation or Rivarlry?, 2012, REP BP 2012/01, page 2, (http://www.chathamhouse.org/sites/files/chathamhouse/public/Research/Russia%20and%20Eurasia/0812bp_dragnevawolczuk.pdf):

[2] Տե՛ս Nikolayi Kaveshnikov,Developing the Institutional Structure of the Eurasian Economic Community, EDB Eurasian Integration Yearbook 2011, էջ 106:

[3] Տե՛ս "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014):

[4] Տե՛ս Consolidated version of the Treaty on European Union (Lisbon Treaty), [2012] OJ C 326/1 and consolidated version of the Treaty on the functioning of the European Union (Lisbon Treaty), [09.05.2008] OJ C 115/1:

մավորումների համար հատկապես ընդհանրական պետք է համարել այն հատկանիշը, որ դրանք կառուցված են վերպետականության սկզբունքի հիման վրա, քանի որ դրանք, ի դեմս իրենց մարմինների, իրավասու են իրենց իրավասությանը հանձնված ոլորտներում ընդունել անդամ պետությունների համար պարտադիր բնույթ կրող որոշումներ[1]:

Ուշագրավ է հատկապես Եվրասիական տնտեսական ինտեգրացիոն կազմավորման շրջանակներում ծավալվող ինտեգրացիոն գործընթացների իրավական ասպեկտները դիտարկել Եվրոպական միությունում իրականացված ինտեգրացիոն գործընթացների փորձի լույսի ներքո, որը, թերևս, այս պահին կարելի է բնորոշել պետությունների ինտեգրման ձևաչափով լավագույնս հաջողված համագործակցությունը:

Բացի այդ, Եվրոպական միության ինտեգրացիոն փորձից ելնելով՝ Եվրասիական տնտեսական միության շուրջ ծավալվող ինտեգրացիոն գործընթացների իրավական ասպեկտների ուսումնասիրումը արդարացված է նաև այն հանգամանքով, որ Եվրոպական միությունը վերպետականության սկզբունքի հիման վրա ստեղծված միակ ինտեգրացիոն կազմավորումն է, ինչը, ինչպես արդեն վերը նշվեց, հանդիսանում է ընդհանրական հատկանիշ երկու ինտեգրացիոն կազմավորումների համար:

Վերանալով Եվրասիական տնտեսական միություն վերաբերյալ հնչող բոլոր թեր և դեմ կարծիքներից՝ փորձենք, Եվրոպական միության շրջանակներում իրականացված ինտեգրացիոն գործընթացների փորձից ելնելով, վեր հանել ԵՏՄ շրջանակներում ծավալվող ինտեգրացիոն գործընթացների բարեհաջող կենսագործման համար կարևոր նշանակություն ունեցող և այս ինտեգրացիոն կազմավորման իրավական բազայի հարստացմանն ուղղված գիտագործնական առաջարկություններ:

Եվրասիական տնտեսական միության հիմնադիր փաստաթուղթը 2014թ.-ի մայիսի 29-ին Աստանայում կնքված և 2015թ.-ի հունվարի 1-ից ուշի մեջ մտած՝ «Եվրոպական տնտեսական միության մասին» պայմանագիրն է, որը ազդարարեց նոր ինտեգրացիոն կազմավորման գոյությունը: «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ ԵՏՄ հետապնդում է այնպիսի նպատակներ, ինչպիսիք են՝

- ✓ անդամ պետությունների տնտեսության կայուն զարգացման համար պայմանների ստեղծումը՝ նրանց ազգաբնակչության կենսամակարդակը բարձրացնելու շահերից ելնելով,
- ✓ ձգտումը՝ Միության շրջանակներում ձևավորել ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատանքային միասնական շուկա,
- ✓ համաշխարհային տնտեսության պայմաններում ազգային տնտեսությունների բազմակողմանի արդիականացումը, համագործակցությունը և մրցունակության բարձրացումը:

Ինչպես ցույց է տալիս Եվրոպական միության փորձը, նման հավակնոտ նպատակների հասնելու առաջնային պայմաններից մեկը հանդիսանում է գործուն ինստի-

[1] Տե՛ս Article 288 of the Consolidated version of the Treaty on the functioning of the European Union (Lisbon Treaty), [09.05.2008] OJ C 115/1, Приложение N 1, пункт 13 "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014) (http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_163855/):
и Приложение N 2, Глава VII, пункт 99 "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014), (http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_163855/):

տուցիոնալ համակարգի առկայությունն է: Այս փաստը արդարացիորեն նկատում է Նիկոլայ Կավեշնիկովը՝ ասելով, որ Եվրասիական տնտեսական միության գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է նրա մարմինների գործունեության արդյունավետությունից, անդամ պետությունների շահերը խորացնելուն ուղղված որոշումներ կայացնելու և դրանք իրագործելու կարողությունից[1]: Այս համատեքստում հատկապես կարևոր է լայն լիազորություններով օժտված դատական համակարգի գոյությունը, որը ինտեգրացիոն գործընթացների ժամանակ պետք է կատարի իրավական կարգավորման բացերը լրացնողի և ինտեգրացիոն կազմավորման իրավունքի բուն էությունը բացահայտողի դեր:

Այդ դերը կատարել է նաև ԵՄ բարձրագույն դատական մարմինը՝ Եվրոպական միության արդարադատության դատարանը, որը իր այդ դերը հիմնավորել է հիմնադիր պայմանագրերով[2] սահմանված իր առաքելության և լիազորությունների վրա հիմնվելով: Դեռևս «Եվրոպական ածխի և պողպատի ընկերակցության հիմնադրման մասին» պայմանագրի 31-րդ հոդվածի համաձայն Եվրոպական միության արդարադատության դատարանի հիմնական առաքելությունը հանդիսացել է այս ինտեգրացիոն կազմավորման հիմնադրման հիմքում ընկած պայմանագրի և դրա իրականացման համար ընդունված ակտերի մեկնաբանման և կիրառման ընթացքում իրավունքի գերակայության պահպանումը[3]: Այդ առաքելությունը ԵՄ բարձրագույն դատական մարմինը պահպանել է նաև ինտեգրացիոն գործընթացների հետագա փուլերում[4]: Բացի այդ Եվրոպական միության արդարադատության դատարանը ինտեգրացիոն գործընթացների հենց սկզբից օժտված է եղել Եվրոպական միության ստեղծմանն ուղղված ինտեգրացիոն կազմավորումների (Եվրոպական ածխի և պողպատի ընկերակցություն, Եվրոպական տնտեսական ընկերակցություն, Եվրոպական ատոմային էներգիայի ընկերակցություն) շրջանակներում ստեղծված իրավունքի նորմերը մեկնաբանելու պարտադիր իրավասությամբ, որը պահպանվել է մինչ օրս[5]:

ԵՄ արդարադատության դատարանին տրված վերը նշված առաքելությունն ու լիազորությունները թույլ են տվել հաղթահարել ինտեգրացիոն գործընթացների հետա-

---

[1] Տե՛ս Nikolayi Kaveshnikov, “Developing the Institutional Structure of the Eurasian Economic Community”, EDB Eurasian Integration Yearbook 2011, էջ 106:

[2] Եվրոպական միության իրավունքում հիմնադիր պայմանագիր հասկացությունը ընդունված է հասկանալ լայն առումով և դրա մեջ ընդգրկել ոչ միայն Եվրոպական ածխի և պողպատի ընկերակցության հիմնադրման (1951թ.), Եվրոպական տնտեսական ընկերակցության հիմնադրման (1957թ.), Եվրոպական ատոմային էներգիայի ընկերակցության հիմնադրման (1957թ.), Եվրոպական միության հիմնադրման մասին պայմանագրերը (1992թ.), այլ նաև դրանց մեջ փոփոխություն կատարելուն ուղղված Միաձուլման մասին պայմանագիրը (1965թ.), թիվ 1 Բյուջետային պայմանագիրը (1970թ.), թիվ 2 Բյուջետային պայմանագիրը (1975թ.), Եվրոպական միասնական ակտը (1986թ.), Ամստերդամի պայմանագիրը (1997թ.), Նիսի պայմանագիրը (2001թ.), ինչպես նաև նշված պայմանագրերին կցված արձանագրություններն ու հռչակագրերը և երրորդ պետությունների հետ կնքված անդամակցության համաձայնագրերը: Վավերացվելուց և ուժի մեջ մտնելուց հետո այս հասկացության մեջ հետագայում կընդգրկվի նաև Լիսաբոնի պայմանագիրը:

[3] Տե՛ս Article 31 of the Treaty establishing the European Coal and Steel Community, signed in Paris on 18 April 1951, (http://www.consilium.europa.eu/uedocs/cmsUpload/Treaty%20constituting%20the%20European%20Coal%20and%20Steel%20Community.pdf):

[4] Տե՛ս Article 19 (1) of the Consolidated version of the Treaty on European Union (Lisbon Treaty), [2012] OJ C 326/1:

[5] Տե՛ս Article 267 of the Consolidated version of the Treaty on the functioning of the European Union (Lisbon Treaty), [2012] OJ C 326/1:

գա զարգացման և ինտեգրացիոն կազմավորումների գոյության համար սպառնալիք ներկայացնող մի շարք կազուսային իրավիճակներ: Բավական է հիշատակել 1960-ական թթ. սկզբներին ԵՄ իրավունքի և անդամ պետությունների ազգային իրավական նորմերի միջև հակասություններ առաջանալու դեպքում ԵՄ իրավունքի նորմին առաջնայնություն տալու[1] և ԵՄ իրավունքի նորմերի ուղղակի գործողության[2] սկզբունքների սահմանումը, որոնք հիմնադիր պայմանագրերով ամրագրված չէին:

Իհարկե, վերը նշված Եվրոպական միության արդարադատության դատարանի կողմից կազուսային իրավիճակներին լուծում տալու իրավունքի վերապահումը աննկատ չանցավ և մի շարք անդամ պետությունների բարձրագույն իրավաքաղաքական շրջանակներում ընդվզում և դժգոհություններ առաջացրեց, քանի որ Եվրոպական միության արդարադատության դատարանը վերը նշված հարցերը հիմնադիր պայմանագրերով իրավական կարգավորման ենթարկելու ուղղակի իրավասություն չուներ: Ավելին, Եվրոպական միության արդարադատության դատարանի կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնին բնորոշ գործառույթների իրականացումը ոմանց կողմից որակվեց որպես իշխանության յուրացում և քաղաքական գործունեության իրականացում:[3] Եվրոպական միության արդարադատության դատարանը ընդվզմանը կարողացավ դիմակայել և իր գործողությունները արդարացնել՝ հիմնվելով հիմնադիր պայմանագրերով իրեն տրված առաքելության վրա, ինչի շնորհիվ դատարանը անգնահատելի դեր է խաղացել ինտեգրացիոն գործընթացների խթանման և ԵՄ իրավական համակարգի կայացման հարցում:

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի համապատասխան դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ այս միջազգային կազմավորման շրջանակներում ստեղծվող բարձրագույն դատական մարմինը՝ Եվրասիական տնտեսական միության դատարանը[4] (այսուհետ՝ նաև Դատարան) Եվրոպական միության արդարադատության դատարանի համեմատությամբ օժտված չէ այնպիսի առաքելությամբ և լիազորություններով, որպեսզի խթանիչ ուժ հանդիսանա այս կառույցի զարգացման և կայացման համար, ինչպիսին եղել է Եվրոպական միության արդարադատության դատարանը Եվրոպական միության համար: Եվրասիական տնտեսական միության դատարանի առաքելությունն ու լիազորությունները հասկանալու համար հարկավոր է ուսումնասիրել այս մարմնի իրավական վիճակը սահմանող փաստաթղթերը: Դատարանի իրավական վիճակը սահմանված է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով և դրան կից ընդունված թիվ 2 Հավելվածի տեսքով ընդունված Եվրասիական տնտեսական միության դատարանի Ստատուտով: Վերջինիս 1-ին կետի համաձայն Դատարանի գործունեության նպատակը անդամ պետությունների և Միության կողմից Պայմանագրի, Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի, Միության կողմից երրորդ պետությունների հետ կնքվող մի-

---

[1] Տե՛ս Case 26/62, *Van Gend en Loos v. Administratie der Belastingen*, [1963] ECR 1 and case 6/64, Flaminio Costa v ENEL [1964] ECR 585:

[2] Տե՛ս Case 26/62, *Van Gend en Loos v. Administratie der Belastingen*, [1963] ECR 1, case 57/65, Alfons Lütticke GmbH v Hauptzollamt Sarrelouis, [1966] ECR 205 and case 2/74, *Defrenne v. SABENA* [1974] ECR 631:

[3] Տե՛ս Mauro Cappelletti, §Is the European Court of Justice Running Wild?¦, European Law Review 12:3, 1987, էջ 4:

[4] Տե՛ս Приложение N 2, Глава I "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014),
(http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_163855/):

ջազգային պայմանագրերի և Միության որոշումների միատեսակ կիրառման ապահովումն է[1]: Ըստ էության սա այն առաքելությունն է, որը կոչված է իրականացնել Եվրասիական տնտեսական միության դատարանը: Եթե համեմատում ենք Եվրոպական միության արդարադատության դատարանի առաքելության հետ, ապա ակնհայտ է դառնում, որ այն ունի ավելի սահմանափակ ձևակերպում, քան Եվրոպական միության արդարադատության դատարանի առաքելությունը և միտված է ոչ թե իրավունքի միատեսակ կիրառման միջոցով իրավունքի գերակայության պահպանմանը, այլ հենց իրավունքի միատեսակ կիրառմանը: Ճիշտ է, այս ձևակերպումը ավելի որոշակի է քան, Եվրոպական միության արդարադատության դատարանի առաքելության ձևակերպումը, սակայն դժվար է պատկերացնել, թե ինտեգրացիոն գործընթացների համար վտանգ ներկայացնող իրավիճակներում ի՞նչ իրավական հիմքերից ելնելով է Եվրասիական տնտեսական միության դատարանը արադարացնելու ծագած իրավական հիմնախնդրին լուծում տալու իր իրավասության առկայությունը: Սա դառնում է անիրատեսական հատկապես Դատարանի կողմից Միության շրջանակներում ստեղծված իրավունքի նորմերը մեկնաբանելու պարտադիր իրավասության բացակայության պայմաններում, որին ավելի հանգամանալից կանդրադառնանք ստորև:

Ավելին, Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի թիվ 2 Հավելվածի 41-րդ կետը ամրագրում է, որ Դատարանի իրավասությունները վեճի քննության հետ կապված որոշվում են Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով, Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրով և երրորդ կողմից հետ կնքվքած միջազգային պայմանագրով[2]: Նման իրավական կարգավորումը բացառում է Դատարանի կողմից նշված փաստաթղթերով չսահմանված իրավասություն իրեն վերագրելու հնարավորությունը, ինչը շատ կարևոր նշանակություն է ունեցել Եվրոպական միության ինտեգրացիոն գործընթացների շարունակականության ապահովման և զարգացման համար: Ճիշտ է, Միության անդամ պետությունները Դատարանի իրավասությունները կարող են ընդլայնել «Եվրասիական տնտեսական միության» մասին պայմանագրի մեջ փոփոխություն կատարելու միջոցով, սակայն պետք է արձանագրենք, որ հիմնադիր պայմանագրում փոփոխություն կատարելը տևական գործընթաց է և բացի դա էլ անդամ պետությունները կարող են համաձայնության չգալ այնպիսի հիմնարար խնդրի լուծմանը վերաբերող Դատարանին իրավասություն տալու հարցի շուրջ, որի հրատապ չկարգավորումը կարող է սպառնալիք դառնալ ամբողջ ինտեգրացիոն գործընթացների ճակատագրի համար:

Եվրասիական տնտեսական միության իրավական կառուցակարգի բացերից պետք է համարել նաև մասնավոր իրավունքի սուբյեկտների սահմանափակ հնարավորությունը Եվրասիական տնտեսական դատարան դիմելու հարցում: Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի թիվ 2 Հավելվածի 39-րդ կետը Եվրասիական տնտեսական դատարան դիմելու հնարավորություն է ընձեռում անդամ պետություններին և տնտեսական գործունեությամբ զբաղվող սուբյեկտներին: Մասնավորապես, նշված դրույթի համաձայն՝ անդամ պետությունների դիմումի հիման վրա Եվրասիական տնտեսական դատարանը քննում է՝

[1] Տե՛ս Приложение N 2, Глава I, пункт 39 "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014):

[2] Տե՛ս Приложение N 2, Глава IV, пункт 41 "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014):

➢ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրի՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին համապատասխանության հետ կապված հարցերը,

➢ անդամ պետության դիմումի հիման վրա մեկ այլ անդամ պետության կողմից Միության առջև ստանձնած պարտավորությունների չկատարման դեմ ուղղված գանգատները,

➢ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների կամ դրա առանձին դրույթների՝ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին և (կամ) Միության մարմինների որոշումներին համապատասխանության հետ կապված հարցերը,

➢ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) վիճարկելու հետ կապված հարցերը:

Մասնավոր իրավունքի սուբյեկտների դիմումի հիման վրա Եվրասիական միության դատարանը քննում է՝

➢ ձեռնարկատիրական կամ այլ տնտեսական գործունեության ոլորտում տնտեսվարող սուբյեկտի իրավունքները և օրինական շահերը շոշափող Հանձնաժողովի որոշման կամ դրա առանձին դրույթների համապատասխանության հարցը Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին և (կամ) Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերին, եթե նման որոշումը կամ դրա առանձին դրույթները հանգեցրել են Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով և (կամ) Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրով երաշխավորված իրավունքների և օրինական շահերի խախտման,

➢ ձեռնարկատիրական գործունեության կամ այլ տնտեսական գործունեության ոլորտում տնտեսվարող սուբյեկտի իրավունքները և օրինական շահերը շոշափող Հանձնաժողովի գործողության կամ անգործության հետ կապված հարցերը, եթե նման գործողությունը կամ անգործությունը հանգեցրել է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով և (կամ) Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրով երաշխավորված իրավունքների և օրինական շահերի խախտման:[1]

Ինչպես երևում է վերը բերված ձևակերպումից, մասնավոր իրավունքի սուբյեկտներից Եվրասիական տնտեսական միության դատարան կարող են դիմել բացառապես տնտեսվարող սուբյեկտները: «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիրը տնտեսվարող սուբյեկտ ասելով հասկանում է իրավաբանական անձ, որը գրանցված է անդամ պետության կամ երրորդ պետության օրենսդրությանը համապատասխան, կամ ֆիզիկական անձ, որը գրանցված է որպես անհատ ձեռնարկատեր անդամ պետության կամ երրորդ պետության օրենսդրությանը համապատասխան[2]: Միայն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող մասնավոր իրավունքի սուբյեկտներին Եվրասիական տնտեսական միության դատարան դիմելու իրավունքի վերապահումը կարող է դանդաղեցնել ինտեգրացիոն գործընթացները, քանի որ, ինչպես ցույց է տալիս Եվրոպական միության փորձը, մասնավոր իրավունքի սուբյեկտները իրենց անգնահատելի ներդրումն են ունեցել ԵՄ իրավական համակարգի կայացման հարցում, և դա մեծապես այն բանի շնորհիվ, որ ինտեգրացիոն գործընթացների հենց սկզբից մասնավոր իրավունքի սուբյեկտներին հնարավորություն է տրված եղել զա-

[1] Տե՛ս Приложение N 2, Глава IV, пункт 39 "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014):
[2] Տե՛ս նույն տեղը:

նազան հայցապահանջներով դիմել ԵՄ արդարադատության դատարան: Նրանց իրավունք է տրված եղել ներկայացնելու անվավերության հայցապահանջներ, անգործության հայցապահանջներ, պատճառված վնասի հատուցման հայցապահանջներ, ազգային դատական մարմիններին միջնորդություններ ներկայացնելու ԵՄ իրավունքի նորմը մեկնաբանման կամ այն ամրագրող ակտի օրինականության որոշման հետ կապված՝ դիմել ԵՄ արդարադատության դատարան: Նշված իրավունքները պահպանվում են մինչ օրս[1]: Օգտվելով ԵՄ արդարադատության դատարան դիմելու իրավունքից՝ մասնավոր իրավունքի սուբյեկտները իրենց կողմից բարձրացվող զանազան իրավական հիմնախնդիրների միջոցով նպաստել են ԵՄ իրավական համակարգ նոր իրավական կարգավորումների կյանքի կոչմանը[2], ինչը հանգեցրել է Եվրոպական միությունում իրավունքի գերակայության վրա հիմնված կանոնակարգված իրավական միջավայրի ստեղծմանը: Եվրասիական տնտեսական միության դատարան մասնավոր իրավունքի սուբյեկտների արդարադատության մատչելիության ապահովումը հանդիսանում է այս ինտեգրացիոն կազմավորման առջև դրված խնդիրների և նպատակների իրականացման հիմնական գրավականն է:

Կարծում ենք, որ Եվրասիական տնտեսական միության դատարան դիմելու՝ մասնավոր իրավունքի սուբյեկտների հնարավորության սահմանափակումը չի բխում առաջին հերթին Միության շահերից, քանի որ մասնավոր իրավունքի սուբյեկտները՝ որպես Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների առավել ակտիվ մասնակիցներ, Եվրասիական տնտեսական միության դատարան ներկայացվող դիմումների միջոցով կարող են մի կողմից նպաստել Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի կայացմանը, իսկ մյուս կողմից՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի դերի և հեղինակության բարձրացմանն ու Միության ազգաբնակչության շրջանում այս ինտեգրացիոն կազմավորման ինքնության արմատավորմանը: Եվրասիական միության դատարան դիմելու մասնավոր իրավունքի սուբյեկտների իրավունքի ազատականացումը կարող է դրական նշանակություն ունենալ Միության հասարակական իրավագիտակցության զարգացման առումով:

Բացի այդ, ինչպես երևում է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի համապատասխան դրույթներից, մասնավոր իրավունքի սուբյեկտներին իրավունքներ տրված են ոչ միայն տնտեսական և ձեռնարկատիրական, այլ նաև այլ ոլորտներում[3]: Մասնավորապես, «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 16-րդ հավելվածի 35-րդ կետի համաձայն «յուրաքանչյուր անդամ պետություն իր տարածքում չպետք է կիրառի կամ ներդնի սահմանափակումներ Միության տարածքում գրանցված կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի

---

[1] Տե՛ս Articles 263, 265 and 340 of the Consolidated version of the Treaty on the functioning of the European Union (Lisbon Treaty), [2012] OJ C 326/1:

[2] Տե՛ս case 152/84, *M. H. Marshall/Southampton and South-West Hampshire Area Health Authority (Teaching),* [1993] ECR 4367, case 26/62, *an Gend en Loos v. Administratie der Belastingen*, [1963] ECR 1, case 25/62 *Plaumann and Co. v. Commission*, [1963] ECR 95, case 17/74, *Transocean Marine Paint Association v. Commission of the European Communities*, [1974] ECR 1063, case C-54/96, *Dorsch Consult* Ingenieurgesellschaft *mbH v. Bundesbaugesellschaft Berlin mbH*, [1997] ECR I-4961:

[3] Տե՛ս Приложение N 26 "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014):

կողմից աշխատողների վարձելու վերաբերյալ»[1]: Ինչպես երևում է այս ձևակերպումից, սույն իրավունքի հասցեատերերը երկուսն են. առաջինը՝ Միության տարածքում գրանցված կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն են, որոնք ունեն առանց սահմանափակումների աշխատողներ վարձելու իրավունք, իսկ երկրորդը ֆիզիկական անձինք են, որոնք ունեն քաղաքացիաիրավական կամ աշխատանքային պայմանագրով առանց սահմանափակումների աշխատելու իրավունք:

Ավելին, թիվ 26-րդ հավելվածով երաշխավորվում է ֆիզիկական անձանց այնպիսի, ինչպիսիք են հեղինակային իրավունքը, անվան իրավունքը, ստեղծագործության անձեռնմխելիության իրավունքը, ստեղծագործության հանրայնացման իրավունքը, գյուտի իրավունքը և այլն[2]: Նշված իրավական ձևակերպումները ի՞նչ են, եթե ոչ մասնավոր իրավունքի սուբյեկտներին հասցեագրված իրավունքներ: Ընդ որում, նշված իրավունքների հասցեատեր են ոչ միայն ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող մասնավոր իրավունքի սուբյեկտները: Անշուշտ, այդ իրավունքների և արտոնությունների շրջանակը, ինտեգրացիոն գործընթացների զարգացմանը զուգահեռ, ընդլայնվելու է: Սակայն նման իրավունքներն ու արտոնությունները դառնում են ձևական, եթե դրանք ապահովված չեն վերպետական անհրաժեշտ դատական պաշտպանության մեխանիզմով: Դրանց պաշտպանությունը միայն ազգային դատական մեխանիզմով սահմանափակելը բավարար չէ, քանի որ ազգային դատական մարմինները կարող են տարբեր մոտեցում ունենալ ԵՏՄ-ի կողմից մասնավոր իրավունքի սուբյեկտներին տրվող իրավունքների բովանդակության և կիրառական դրսևորումների վերաբերյալ: Հարկավոր է ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվող մասնավոր իրավունքի սուբյեկտներին Եվրասիական տնտեսական միության դատարանում արդարադատություն հայցելու իրավունքի մատչելիություն ապահովելու միջոցով երաշխավորել «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով նրանց տրվող իրավունքների և արտոնությունների գործնական կիրառումը:

Եվրասիական տնտեսական միության իրավական ռեժիմը ուսումնասիրելիս հատկապես հետաքրքրական է այս ինտեգրացիոն կազմավորման իրավունքի ընկալման և կիրառման միասնականության հարցը, ինչը ենթադրում է նմանատիպ հանգամանքներում համանման իրավական մոտեցման ցուցաբերում: Միության իրավունքի ընկալման և կիրառման միասնականությունից է մեծապես կախված ինտեգրացիոն գործընթացների հաջողությունը: Թերևս այս գիտակցումով է պայմանավորված այն հանգամանքը, որ Եվրասիական տնտեսական միության հիմնադիր փաստաթուղթը կերտողները դրանում նախատեսել են այս ինտեգրացիոն կազմավորման շրջանակներում ստեղծված իրավունքի նորմերի մեկնաբանմանը վերաբերող Եվրասիական տնտեսական միության դատարանի և ազգային իշխանության մարմինների միջև համապատասխան իրավական հաղորդակցության մեխանիզմ: Մասնավորապես, «Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը» Դատարանին օժտում է անդամ պետությունների դիմումի հիման վրա Պայմանագրի, Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի և Միության մարմինների որոշումների մեկնաբանման իրավասություն. այդ հարցերով կարող են դիմել նաև Միության մարմիննե-

[1] Տե՛ս Приложение N 16, пункт 35 "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014):

[2] Տե՛ս Приложение N 26 "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014):

րի աշխատակիցներն ու պաշտոնատար անձինք՝ պայմանավորված աշխատանքային իրավահարաբերություններով:[1]

Այս ինստիտուտը առկա է նաև ԵՄ իրավական համակարգում և հայտնի է նախնական կարգավորման ընթացակարգ (Preliminary ruling procedure) անվամբ: Վերջինիս կարևորությունը այն է, որ երաշխավորում է Եվրոպական միության իրավունքի միատեսակ մեկնաբանության ու միատեսակ կիրառության խնդիրների գործնական իրագործումը: Նախնական կարգավորման ընթացակարգը կապ է ստեղծում Եվրոպական միության արդարադատության դատարանի ու ազգային իշխանության մարմինների միջև ԵՄ իրավունքի նորմերը կիրառելու հարցում: Իր ներկայիս հեղինակության համար ԵՄ իրավական համակարգը մեծապես պարտական է հենց նախնական կարգավորման ընթացակարգին, քանի որ դրանով են կյանքի կոչվել այդ համակարգի հիմնաքար հանդիսացող ԵՄ իրավունքի հիմնական սկզբունքները[2]:

Եվրասիական տնտեսական միության արդարադատության համակարգում այս ընթացակարգի կիրառումը էապես տարբերվում է ԵՄ իրավական համակարգում գոյություն ունեցող համանման ընթացակարգից, որտեղ իրավական նորմերի մեկնաբանման վերաբերյալ հարցում կարող են ներկայացնել բացառապես դատական մարմինները[3]: Մինչդեռ Եվրասիական տնտեսական միությունում նման հարցում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը հստակ որոշված չէ, և այն որոշելու իրավունք վերապահված է յուրաքանչյուր անդամ պետության հայեցողությանը: Մասնավորապես, Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի թիվ 2 Հավելվածի 49-րդ կետի համաձայն՝ մեկնաբանմանը վերաբերող հարցումները ներկայացնելու իրավունք ունեցող մարմինների ցանկը որոշվում է անդամ պետության կողմից և փոխանցում է Եվրասիական տնտեսական միությանը[4]: Այս ձևակերպումից երևում է, որ հարցում ներկայացնելու իրավունք կարող են ունենալ ոչ միայն դատական մարմինները: Նման մոտեցումը մի կողմից դրական է այն առումով, որ կարող է ապահովել Եվրասիական տնտեսական միության դատարան հարցումների մեծ հոսք, ինչը կնպաստի Եվրասիական տնտեսական իրավական համակարգի զարգացմանը և նոր իրավական կարգավորումների կյանքի կոչելուն, իսկ մյուս կողմից բացասական է այն առումով, որ Եվրասիական տնտեսական միության դատարան կարող են ներկայացվել բազմաթիվ հարցումներ այնպիսի հարցերի վերաբերյալ, որոնց իրավական կարգավորումը հստակ է և երկիմաստ մեկնաբանությունների տեղիք չի տալիս: Կարծում ենք, որ հարկավոր է հարցումներ ներկայացնելու իրավունքը վերապահել Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների դատական մարմիններին, քանի որ Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմի հետ կապված գործ քննող դատավորները պրոֆեսիոնալ իրավաբաններ են և նրանք ավելի ճիշտ կարող

---

[1] Տե՛ս Приложение N 2, Глава IV, пункт 46 "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014):

[2] Խոսքը վերաբերում է ԵՄ իրավունքի գերակայության, ուղղակի գործողության և ուղղակի կիրառելիության, ինչպես նաև ԵՄ իրավունքի ինքնուրույն աղբյուր և ԵՄ չգրված օրենսդրությունը հանդիսացող ԵՄ իրավունքի ընդհանուր սկզբունքներին (մարդու իրավունքների պաշտպանության սկզբունք, համաչափության սկզբունք, իրավական որոշակիության սկզբունք, լսված լինելու իրավունքի սկզբունք և այլն):

[3] Տե՛ս article 367 of the consolidated version of the Treaty on the functioning of the European Union (Lisbon Treaty), [2012] OJ C 326/1:

[4] Տե՛ս Приложение N 2, Глава IV, пункт 49 "Договора о Евразийском экономическом союзе" (Подписан в г. Астане 29.05.2014):

են գնահատել Եվրասիական տնտեսական միության դատարանին հարցում ներկայացնելու անհրաժեշտությունը: Բացի այդ, նման մոտեցումը թույլ կտա խուսափել չհիմնավորված հարցումներով Դատարանին ծանրաբեռնելու վտանգից:

Հետաքրքրական է նաև Եվրասիական տնտեսական միության դատարանի կողմից տրվող պարզաբանող որոշման իրավաբանական ուժի հարցը: Ի տարբերություն Եվրոպական միության արդարադատության դատարանի, որի կողմից տրվող պարզաբանումները պարտադիր են ԵՄ բոլոր անդամ պետությունների համար, Եվրասիական տնտեսական միության դատարանի կողմից տրվող պարզաբանումները ունեն խորհրդատվական բնույթ և չեն զրկում անդամ պետություններին Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմերը համատեղ մեկնաբանելու իրավունքից: Փաստորեն, Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին լայն հայեցողություն է թողնված Միության իրավունքի նորմերի բովանդակությունը մեկնաբանելու և ընկալելու հարցում: Նման իրավական կարգավորումը հղի է անդամ պետությունների միջև առանձին հասարակական հարաբերությունների կարգավորման շուրջ տարաձայնությունների առաջացման վտանգով, քանի որ անդամ պետությունները, տարբեր դիրքորոշումներ ունենալով հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ, կարող են միասնական դիրքորոշում չձևավորել դրա լուծման հարցում և այն թողնել չկարգավորված:

Դժվար է պատկերացնել, թե ինչպես է Եվրասիական տնտեսական միության դատարանը իրականացնելու Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի թիվ 2 Հավելվածի 1-ին կետով հռչակված անդամ պետությունների և Միության կողմից Պայմանագրի, Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի, Միության կողմից երրորդ պետությունների հետ կնքվող միջազգային պայմանագրերի և Միության որոշումների միատեսակ կիրառման ապահովման առաքելությունը Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմերի մեկնաբանմանն ուղղված պարտադիր որոշումներ ընդունելու իրավասության բացակայության պայմաններում: Դատարանի մոտ Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմերը մեկնաբանելու պարտադիր իրավասության բացակայությունը կարող է խարխլել Եվրասիական տնտեսական միության ինտեգրման հիմքերը և արգելք հանդիսանալ ինտեգրացիոն գործընթացների զարգացման համար: Դատարանին հարկավոր է օժտել ոչ միայն պարտադիր բնույթ կրող պարզաբանումներ տալու իրավասությամբ, այլ նաև այդ պարզաբանումներին հաղորդել համապարտադիր (Erga omnes) բնույթ: Այսինքն, դրանք պետք է պարտադիր լինեն ոչ միայն անհատական իրավահարաբերության մասնակիցների համար, որոնց իրավունքների կամ պարտականությունների հետ կապված տրվել է պարզաբանումը, այլ նաև Միության բոլոր անդամ պետությունների համար: Ինչպես ցույց է տալիս ԵՄ փորձը, միայն ինտեգրացիոն կազմավորման իրավունքի միտեսական ընկալման և կիրառման միջոցով է հնարավոր հասնել հռչակված խնդիրների իրականացմանը և նպատակների ձեռքբերմանը, ինչպես նաև ապահովել իրավունքի գերակայության սկզբունքի իրացումը անդամ պետությունների համագործակցության բոլոր ոլորտներում:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ պետք է արձանագրենք, որ Եվրասիական տնտեսական միության հիմնադիր պայմանագրում բացակայում են բավարար իրավական հիքմեր, որոնք թույլ կտան Եվրասիական տնտեսական միության դատարանին այլ իրավական դրույթների վրա հիմնվելով արդարացնել ինտեգրացիոն գործընթացների համար վտանգ ներկայացնող հիմնախնդրի իրավական կարգավորման իրավա-

սության առկայությունը: Հարկավոր է Դատարանին օժտել ավելի հավակնոտ առաքելությամբ և Եվրասիական տնտեսական միության իրավունքի նորմերը մեկնաբանելու պարտադիր իրավասություն տալու միջոցով նախադրյալներ ստեղծել այդ առաքելության իրականացման համար: Միայն նման իրավասություններով դատական համակարգի առկայության պայմաններում է հնարավոր հասնել Եվրասիական տնտեսական միության առջև դրված խնդիրների և նպատակների իրականացմանը:

Եվրոպական միության ինտեգրացիոն գործընթացների փորձը ուսանելի է նաև այն առումով, որ հարկավոր է ազատականացնել Եվրասիական տնտեսական միության դատարան դիմելու իրավունք ունեցող մասնավոր իրավունքի սուբյեկտների շրջանակը և այդ իրավունքը չվերապահել բացառապես ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտներին: Մասնավոր իրավունքի սուբյեկտներին Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տրվող իրավունքների և արտոնությունների պաշտպանությունը միայն ազգային դատական մեխանիզմով սահմանափակելը բավարար չէ, քանի որ ազգային դատական մարմինները կարող են տարբեր ընկալում ունենալ Միության կողմից մասնավոր իրավունքի սուբյեկտներին տրվող իրավունքների բովանդակության և կիրառական դրսևորումների վերաբերյալ: Ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվող մասնավոր իրավունքի սուբյեկտներին՝ Եվրասիական տնտեսական միության դատարան արդարադատության մատչելիության ապահովումը կնպաստի Եվրասիական տնտեսական միության իրավական համակարգի կայացմանը:

ПРАВОВЫЕ АСПЕКТЫ ИНТЕГРАЦИОННОГО ПРОЦЕССА ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА В СВЕТЕ ОПЫТА ИНТЕГРАЦИИ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА

Арман Саргсян
Ассистент кафедры европейского и международного права ЕГУ, канд. юрид. наук

Статья посвящена исследованию интеграционных процессов Евразийского экономического союза в свете опыта интеграции Еврпейского Союза. Статья направлена на изучение сходства и различий между двумя интеграционными процессами. Автор, с учетом опыта интеграции Европейского Союза, выработал ряд академических рекомендаций, имеющих важное значение для реализации интеграционных процессов Евразийского экономического союза.

В частности, автор предложил путем внесения соответствующих изменений в учредительные документы наделить Суд евразийского экономического союз более амбициозной миссией и обязательной комитенцией интерпретировать нормы Евразийского экономического права, в том числе либерализовать круг субъектов частного права, имеющих право обращаться в Суд Евразийского экономического союза, не оставляя это право исключительно за субъектами, занимающимися предпринимательской деятельностью.

THE LEGAL ASPECTS OF INTEGRATION PROCESS OF THE EURASIAN ECONOMIC UNION IN THE CONTEXT OF EUROPEAN UNION INTEGRATION PRACTICE

Arman Sargsyan
Assisting Professor at the YSU Chair of European and International Law,Candidate of Legal Scienses

This article is dedicated to the investigation of the Eurasian Economic Union integration processes in the light of the European Union integration practice. The article aims to explore the differences and similarities between the two integration processes and, considering the European Union integration practices, come up with/develop a number of academic and practical recommendations for the successful implementation of the Eurasian Economic Union integration processes. The author particularly recommended amending the founding documents for endowing the Court of Eurasian Economic Union with more comprehensive mandate and with mandatory competence to interpret the legal provisions of Eurasian Economic Union. In this regard, the author also advocates for enlarging the framework of private law entities/legal personalities in respect to filing an application to the Eurasian Economic Union Court: currently the attribution of this right is limited to only those subjects that are engaged in entrepreneurial practices.

Բանալի բառեր՝ *Եվրոպական միություն ինտեգրացիոն գործընթացներ, Եվրասիական տնտեսական միության դատարանի առաքելություն, իրավասությունների շրջանակ և որոշումների պարտադիրություն, ձեռնարկատիրական գործունեություն, մասնավոր իրավունքի սուբյեկտներ:*

Ключевые слова: *Интеграционные процессы Европейского Союза, миссия Суда Евразийского экономического союза, круг компетенций и обязательность решений, предпринимательская деятельность, субъекты частного право.*

Key words: *Eurpean Union integration processes, mission of the Court of the Eurasian Economic Union, the framework of competance and mandatory nature of decisions, business activity, privite law entities.*